

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2020-1-3-Ա

ք. Երևան

16.01.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի հունվարի 16-ի նիստում քննարկեց 2019 թվականի դեկտեմբերի 18-ին Ստյոպա Սամվելի Ծառուկյանի (Երևան, Վարդանանց փ., 2. 5Ա, տարածք 367) կողմից ներկայացված «ՀԱՄՈՎ ԽԻՆԿԱԼԻ» (№20190508) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 3-րդ, 7-րդ ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար, ինչպես նաև որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ համակցված ապրանքային նշանի գերիշխող մաս զբաղեցնող «Խինկալի» բառը բացի 30-րդ դասի «խինկալի» ապրանքից 29-րդ և 30-րդ դասերի մնացած բոլոր ապրանքների համար, սպառողին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի հարցում, իսկ «խինկալի» ապրանքի և 43-րդ դասի ծառայությունների համար ունի նկարագրական բնույթ, քանի որ «խինկալի»-ն հանդիսանում է ապրանքի տեսակ, տվյալ դեպքում կերակրի տեսքով և լայն

կիրառություն ունի հանրային սննդի բնագավառում: Ինչ վերաբերում է «Համով» բառին, ապա այն չունի տարբերակիչ հատկություն, քանի որ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն հանդիսանում է գովաբանական բնույթի նիշ: Օրենքի 13-րդ հոդվածի, Կարգի 104-րդ կետի համաձայն բացառիկ իրավունքը չի տարածվում ապրանքային նշանի այն տարրերի վրա, որոնք չեն կարող գրանցվել որպես ապրանքային նշան, մասնավորապես նկարագրական բնույթի տարրերի վրա, դրանք բարեխիղճ օգտագործելու և երրորդ անձանց օրինական շահերը չխախտելու պայմանով: Եթե չպահպանվող տարրը կազմում է ապրանքային նշանի գերիշխող մասը, ապա եզրակացություն է արվում տվյալ նշանը որպես ապրանքային նշան գրանցելու անհնարինության մասին և որոշում է ընդունվում ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին:

Կոլեգիայի անդամը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «խինկալի» բառը բացի 30-րդ դասի «խինկալի» ապրանքից 29-րդ և 30-րդ դասերի մնացած բոլոր ապրանքների համար, սպառողին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի հարցում, իսկ «խինկալի» ապրանքի և 43-րդ դասի ծառայությունների համար ունի նկարագրական բնույթ, քանի որ «խինկալի»-ն հանդիսանում է ապրանքի տեսակ, տվյալ դեպքում կերակրի տեսքով և լայն կիրառություն ունի հանրային սննդի բնագավառում: Ինչ վերաբերում է «Համով» բառին, ապա այն չունի տարբերակիչ հատկություն, քանի որ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն հանդիսանում է գովաբանական բնույթի նիշ::

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և պնդում էր բողոքում նշված իր հիմնավորումները:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել Ստյոպա Սամվելի Ծառուկյանի կողմից ներկայացված՝ «ՀԱՄՈՎ ԽԻՆԿԱԼԻ» (No20190508) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՆԱԽՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ